ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

23 հոկտեմբերի 2025 թվական

5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 17.10

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՝ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 10 անդամ՝

Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,
Աննա Ավետիսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Սամվել Հակոբյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արշակ Սարգսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արմեն Քոչարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Մանուկ Սուքիասյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արմենակ Դանիելյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Գրիգոր Իսկանդարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Սուսաննա Մելիքյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Սամվել Հարոյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան, խնդրեմ:

Վահան Ավագյան

-Պարոն Ավինյան, տեղեկացված ենք, որ 2026թ. Հայաստանը հյուրընկալելու է Կենսաբազմազանության կողմերի համաժողովը՝ COP17-ը: Հաշվի առնելով Երևանի

կենդանաբանական այգու խնդիրները (ցանկապատի, կենդանավանդակների, փղի զույգի և այլն), առաջարկում եմ հրատապ զբաղվել այդ խնդիրներով, որովհետև տարբեր երկրներից այցելելու է մոտ 30.000 ներկայացուցիչ: Ցանկալի է, որ այս հարցը բարձրաձայնվի նաև ՀՀ կառավարությունում՝ Հայաստան եկող հյուրերին պատշաճ դիմավորելու և կենդանաբանական այգին իր բոլոր հարմարանքներով ներկայացնելու համար որևէ ֆոնդից գումար հատկացնելու նպատակով:

Ցանկանում եմ նաև Ձեր ուշադրությունը սևեռել Երևանի բուսաբանական այգու գործընթացին, որը շատ դանդաղ է առաջ ընթանում:

Երկրորդ հարցը հնչեցնեմ. այդքան խաղահրապարակներ ենք կառուցում, վերանորոգում, սակայն ունենք բողոքներ բնակիչներից, որ հին խաղահրապարակներում երեխաները վնասվում են: Խնդրում եմ, որ վարչական շրջանների ղեկավարներն այդ ուղղությամբ միջոցներ ձեռնարկեն և վերացնեն վտանգավոր սարքավորումները:

Տիգրան Ավինյան

- COP17-ի մասով Երևանի քաղաքապետարանն ունենալու է ներգրավվածություն և նախաձեռնելու է քաղաքների ընդհանուր համաժողով՝ հարցի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է կենդանաբանական այգուն, այնտեղ ներկայումս ինտենսիվ իրականացվում են աշխատանքներ: Որոշ աշխատանքներ կհասցնենք ավարտել մինչև COP17-ը:

Մանրամասներ կներկայացնի նաև քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

Հին խաղահրապարակների վերաբերյալ տեղեկացնեմ, որ նախորդ տարի 132 խաղահրապարակ է կառուցվել, իսկ այս տարի ամբողջապես ավարտվելու է 115-ը: Հին խաղահրապարակները գտնվում են մեր ուշադրության կենտրոնում և որոշ աշխատանքներ իրականացվում են ընթացիկ նորոգման ծրագրերով: Ահազանգերի մասին տեղյակ եմ և բոլոր այդ տեսակ խաղահրապարակներին կանդրադառնանք ընթացիկ նորոգման ծրագրերով:

Տիկին Հայկազյան, խնդրում եմ ներկայացրեք, թե ինչ աշխատանքներ են կատարվում կենդանաբանական այգում:

Սիրարփի Հայկազյան

-Պարոն Ավագյանը կենդանաբանական այգու խորհրդի շատ ակտիվ անդամ է և տեսնում է, թե ինչ աշխատանքներ են իրականացվում: Ես կարծում եմ խոսքը վերաբերում էր, թե արդյոք կկարողանանք կառավարությունից լրացուցիչ ֆինանսավորում ստանալ որոշ աշխատանքների համար: Այս մասով տեղեկացնեմ, որ կառավարության հետ COP17-ի ծրագիրը քննարկելիս մի գուցե կարողանանք լրացուցիչ ծրագիր ներկայացնել:

Տիգրան Ավինյան

-Բուսաբանական այգու վերաբերյալ տեղեկացնեմ, որ բարեկարգման աշխատանքների ավարտի ժամկետը 2026 թվականի սեպտեմբեր ամիսն է: Վերջին շրջայցի ժամանակ աշխատանքներն ընթանում էին ինտենսիվ, սակայն հաշվի կառնենք Ձեր նշածը և առաջիկայում ևս շրջայց կիրականացնենք:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Աննա Ավետիսյան, խնդրեմ:

Աննա Ավետիսյան

-Երևան քաղաքի 2024թ. բյուջեից 70 մլն. ՀՀ դրամ գումար տրամադրեցիք «Էրեբունի-Երևանի» տոնակատարությունների երգերին, բայց անցավ 2024 և 2025 թվականների «Էրեբունի-Երևան» տոնակատարությունները և այդ երգերը մենք այդպես էլ չլսեցինք: Վերջիվերջո արդեն 2-րդ տարին է, այդ երգերից ոչ մեկի վերաբերյալ լուր չունենք:

Ցանկանում եմ իմանալ ինչու՞մն է խնդիրը, ինչու՞ գումարը տրամադրում եք, բայց երգերը չենք լսում:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն տիկին Ավետիսյան, իրականում այդ երգերը լսել ենք այս տարվա «Էրեբունի-Երևան» տոնակատարության ժամանակ:

Հարցի վերաբերյալ հավելյալ պարզաբանումներ կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

Գոշ Սարգսյան

-«Էրեբունի-Երևան» տոնակատարության շրջանակներում այս տարի մի ամբողջ օր այդ երգերը հնչել են բոլոր բեմահարթակներում, իսկ տեսահոլովակը հրապարակվել է Երևանի քաղաքապետարանի բոլոր կայքերում, սոցիալական էջերում:

Աննա Ավետիսյան

-Պարոն Սարգսյան, Դուք տրամադրել եք բավականին մեծ գումար, որ այդ երգերը մնան այսպես անշուք, չլսված և հասարակության մեջ լայն տարածում չունենա՞ն: Կարծում եմ դա նորմալ չէ: Եթե մենք հիշենք նախորդ տարիների «Էրեբունի-Երևան» տոնակատարության երգերը, քաղաքացիների մեծամասնությունն այդ երգերն արդեն երկրորդ օրվանից անգիր գիտեին:

Եթե այստեղ որևէ մեկն այդ երգից որևէ բառ կարող է հիշել, եթե լսել են իհարկե, ես կհամարեմ, որ ինչ-որ չափ երգը ստացված է, բայց որքան մարդ է այստեղ ներկաներից այդ երգը լսել: Այդ գումարը բավական մեծ գումար է, որպեսզի այդ երգերը լայն շրջանառության մեջ չլինեն:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն տիկին Ավետիսյան, ցանկանում եմ տեղեկացնել, որ իրականում այդ բոլոր երգերը հայտնի երգեր են, որոնք նոր ձևով, նոր կատարումներով ներկայացնելու

խնդիր էր դրված և թե որքանով է ստացվել, և որքանով կհիշվեն՝ երևի ժամանակը ցույց կտա:

Հաջորդ Հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հակոբյան, խնդրեմ:

Սամվել Հակոբյան

-Առաջին հարցս հետևյալն է. երբ բակերի հիմնանորոգում է կատարվում, մրցույթում շահող կազմակերպության հետ կնքվում է պայմանագիր: Այդ պայմանագիրը միակ փաստաթուղթն է, որ մեզ հասանելի է: Պայմանագրում երևում է կնքման ամսաթիվը և աշխատանքների կատարման ժամկետը:

Ինչպե՞ս է լինում, որ սահմանված ժամկետում աշխատանքները չեն ավարտվում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Վիլեն Արևշատյանը:

Վիլեն Արևշատյան

-Նման դեպքերը կարող են պայմանավորված լինել նրանով, որ օրինակ՝ մրցույթի ժամանակ մեկից ավելի մասնակիցներ են լինում և բողոքարկվում է: Կարող են լինել նաև այլ դեպքեր:

Տիգրան Ավինյան

-Ամեն դեպքում, եթե պայմանագրով ամրագրված ժամկետների մասին է խոսքը, ապա այդտեղ կիրառվում են տույժեր և տուգանքներ:

Սամվել Հակոբյան

-Երկրորդ հարցս վերաբերում է նստարաններին: Իմ պատկերացմամբ ավելի ճիշտ կլինի քաղաքապետարանը նստարանի կոնկրետ ձև որոշի, քանի որ վերջին 3-4 տարվա ընթացքում ձեռք է բերվել 5-6 տեսակի նստարան, յուրաքանչյուր վարչական շրջան մի տեսակի: Իմ կարծիքով Կենտրոն վարչական շրջանի ձեռք բերած վերջին նստարանները լավն էին: Եվ այն բակերում, որտեղ կան հենակով նստարաններ՝ թեկուզ և հին, պետք չէ հեռացնել ու տեղադրել նոր, բայց առանց հենակի նստարաններ: Նաև նշեմ, որ նույն նստարանը տարբեր վարչական շրջաններ ձեռք են բերում տարբեր արժեքներով:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հակոբյան, Ձեր մատնանշած բոլոր հարցերը կարգավորվում են «Գնումների մասին» օրենքով և կառավարության համապատասխան որոշմամբ: Այդ քաղաքականությունը վարում է ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ հաշվի առնելով ոչ միայն Երևանի քաղաքապետարանի, այլ բոլոր պետական մարմինների գնումներ իրականացնողների դիտարկումները և պարբերաբար որոշակի հարցեր շտկվում են:

Շատ դեպքերում խիստ մոտեցումը բերել է մի իրավիճակի, որ շատ մրցույթներին մասնակից չի լինում, որովհետև շատերը հայտնվել են սև ցուցակում: Սև ցուցակի որոշակի

կարգավորումներ կան նաև, որ փոխկապակցված անձինք ևս ավտոմատ հայտնվում են սև ցուցակում:

Ինչ վերաբերում է նստարանների որակին, ապա նշեմ, որ իրականում որոշակի ազատություն է տրված վարչական շրջանների ղեկավարներին որոշումներ կայացնելու համար՝ պահպանելով որոշակի որակական չափորոշիչներ, բայց նաև պետք է հաշվի առնենք, որ օրինակ՝ Կենտրոն վարչական շրջանի վերջերս ձեռք բերած նոր նստարանները և հները գնային առումով էական տարբերվում են:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արշակ Սարգսյան, խնդրեմ:

Արշակ Սարգսյան

-Նախորդ նիստին ես բարձրաձայնել էի Շուշի թաղամասի՝ «ժողովրդից գողացված ճանապարհի» մասին: Ի՞նչ ընթացքում է այդ գործընթացը:

Ե՞րբ է լինելու Հրազդանի կիրճին բնապահպանական կարգավիճակ տալու գործընթացը, որովհետև Հրազդանի կիրճում ես տեսնում եմ թիթեղյա տաղավարներ, որոնց դեմ Դուք պայքարում էիք: Ինչու՞ չեն հեռացվում նմանատիպ տաղավարները Հրազդանի կիրճից:

Նաև կցանկանայի տեղեկատվություն ստանալ Աջափնյակ վարչական շրջանում՝ Հյուսիս-հարավ ավտոճանապարհին էստակադա կառուցելու հարցի վերաբերյալ: Ի՞նչ միջոցառումներ են նախատեսվում, քանի որ Հյուսիս-հարավ ավտոճանապարհի կառուցման պայմանագրով նախատեսված է, որ մայրուղին պետք է անցանելի լինի, լուսացույցեր չի թույլատրվում և մարդկանց անցնելու համար վերգետնյա անցումներ պետք է լինեն:

Ուզում եմ իմանալ այդ հատվածում էստակադա լինելու է, թե ոչ, խցանումներն այդ հատվածում վերանալու են, թե ոչ:

Տիգրան Ավինյան

-Հրազդանի կիրճի վերաբերյալ, տեղեկացնեմ, որ ավագանու որոշման նախագծի պատրաստման առումով ամեն ինչ արվել է: Մասնավորապես՝ գույքագրվել է Հրազդանի կիրճի ամբողջ տարածքում գտնվող ֆլորան, ֆաունան, պատմամշակութային հուշարձանները, բոլոր առանձնահատկությունները, ամրագրվել են սահմանները: Այսինքն՝ Հրազդանի կիրճին հատուկ կարգավիճակ տալու որոշման համար ամեն ինչ պատրաստ է: Մնում է, որ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից առաջարկվող օրենքն ընդունվի:

Ինչ վերաբերում է Աջափնյակում էստակադա կառուցելուն, ապա տեղեկացնեմ, որ դա ֆինանսավորում պահանջող հարց է: Քննարկումներ պետք է իրականացվեն գործընկերների հետ ֆինանսավորման վերաբերյալ և ֆինանսավորում ապահովվելու դեպքում էստակադան կկառուցվի:

Շուշի թաղամասի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետ Ալիկ Վարդազարյանը:

Ալիկ Վարդազարյան

-Հարցը վերաբերում է Նազարբեկյան թաղամասի 44/13 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրին, որը մասնավոր սեփականությամբ գույք է հանդիսանում: Պարոն Սարգսյան, Ձեր կողմից ներկայացվածը, որ արահետը օգտագործվում է բնակիչների կողմից, դա փաստացի սեփականություն հանդիսացող հողատարածքի մեջ է գտնվում ու խնդիր էր առաջանում նշված հողատարածքից այդ ճանապարհահատվածը տարանջատելու վերաբերյալ: Դա միանշանակ խնդրահարույց հարց է:

Կառուցման փուլում գտնվող բազմաֆունկցիոնալ համալիրի նախագծման թույլտվության չափորոշիչներով հստակ ամրագրված է թե՛ կառուցապատումը, թե՛ անջրանցիկ մակերևույթը, թե՛ կանաչ տարածքները: Տվյալ կառուցապատման համաձայնեցված նախագծում այդ ճանապարհը նույն իր լայնությամբ նախատեսվում է մնալ որպես ճանապարհ: Որպես խնդրի լուծման տարբերակ, առաջարկվում է նախագծում ամրագրել այդպես ճանապարհ, բայց տանաջատելը միանշանակ խնդիր կլինի: Նաև մենք դիտարկել ենք այդտեղ հարևանությամբ առկա սեփականությամբ գույքերին մոտեցման հնարավորության հարցը, որ չկա նմանատիպ գույք, որ մոտեցում չունի և չի ապահովվում համայնքային ներբակային ճանապարհներից: Հետևաբար կարծում եմ, որ խնդրի լուծման տարբերակն այն է, որ համաձայնեցման նախագծով ամրագրվի, որ ճանապարհը սեփականությամբ հողատարածքի մեջ մնա որպես ճանապարհ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմեն Քոչարյան, խնդրեմ:

Արմեն Քոչարյան

-Հարցս վերաբերում է այսօրվա նիստի օրակարգի 15-րդ կետին: Նիստից առաջ մեր խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանն առաջարկեց հարցը դարձնել զեկուցվող, սակայն չընդունվեց:

Դուք նշեցիք, որ հանդիպել եք Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտայի հ.28/26 հասցեի հարակից շենքի բնակիչների հետ շաբաթօրյակի շրջանակներում և դրանից բավական ժամանակ է անցել: Ի՞նչ քննարկում և հարցի լուծում կա, քանի որ արդեն նախնական համաձայնություն ենք տալիս:

Այս շենքի հետ կապված հանրային լսումների ժամանակ մթնոլորտը լարված էր, քանի որ բնակիչների և կառուցապատողի միջև մեծ վեճ էր հասունացել: Նույն առաջարկը մենք արել ենք լսումների ժամանակ, որ կարող է հողամասի փոփոխություն տեղի ունենալ՝ և՛

բնակիչների, և՛ կառուցապատողի կողմից բացասական արձագանք չի եղել, այլ համաձայնության նշաններ ենք նկատել:

Ի՞նչ փուլում է այդ հարցը և ինչպե՞ս եք այդ հարցի լուծումը գտնելու, քանի որ խոսք եք տվել, որ այդտեղ շենք չի կառուցվելու:

Տիգրան Ավինյան

-Պարոն Քոչարյան, ես հանդիպման ժամանակ բնակիչներին ասել եմ, որ մենք առաջարկելու ենք կառուցապատողին հողի փոխանակություն: Եթե կառուցապատողի հետ համաձայնություն ձեռք բերենք, ապա այդ հարցը կքննարկվի Երևանի ավագանու նիստում:

Հաջորդ շաբաթ այդ առումով ես ակնկալում եմ որոշակի պատասխաններ: Եթե համաձայնության չգանք, ես բնակիչներին տեղեկացրել եմ, որ հիմնական շեշտը կդնենք առկա խնդիրների լուծման վրա, այսինքն՝ ճանապարհի, խաղահրապարակների և ընդհանուր տարածք ստեղծելու վրա:

Նախապատմությունը հետևյալն է. այդ կառուցապատողի հողամասը գտնվում է նոր կառուցվող Արշակունյաց–Իսակովի պողոտաների ճանապարհի եզրին: Կառուցապատողն ինքնակամ Երևան քաղաքին է տրամադրել իր հողամասի մի մասը: Այսինքն՝ բոլոր հնարավոր պահանջները, որ քաղաքապետարանը կառուցապատողի առջև դրել է, նա իրականացրել է: Այժմ մենք պետք է բանակցենք հողի փոխանակության վերաբերյալ: Եթե հողի փոխանակության լավ տարբերակ գտնենք, այդ տրամաբանությամբ հարցին լուծում կտանք, եթե ոչ, ապա պետք է գնանք ընթացիկ լուծումներ տալու ճանապարհով:

Արմեն Քոչարյան

-Երկրորդ հարցս վերաբերում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ուլնեցու փողոցի 2-րդ փակուղու հ.5 շենքին: Քաղաքացին դիմել է «Մայր Հայաստան» խմբակցություն, որպեսզի այս հարցը բարձրաձայնենք ու լուծումներ գտնենք:

Նշված շենքի մեկ մուտքում առկա է կոյուղատար համակարգի խնդիր: Բնակիչը դիմել է թե՛ համատիրություն, թե՛ «Վեոլիա ջուր» ընկերություն, սակայն հարցը չի լուծվում: Բնակարանները գտնվում են կիսանկուղային հարկում և կոյուղատար համակարգի չաշխատելու դեպքում, կոյուղաջրերը լցվում են բնակարանները: Բնակիչները միջոցներ են ձեռնարկել և այժմ կոյուղաջուրը լցվում է բակ, հակասանիտարական վիճակ է տիրում դրսում և բնակիչները շնչում են այդ օդը: Այնտեղ կա մոտ 10-12մ կոյուղագծի փոխելու խնդիր, որը բնակիչները չեն կարողանում իրենց միջոցներով իրականացնել: Բնակիչների խնդրանքն է, որ այդ հարցը լուծում ստանա, քանի որ մոտենում է ձմեռը:

Տիգրան Ավինյան

-Ես առաջարկում եմ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանին՝ հարցի լուծման նպատակով ընդունել բնակչին:

Արտակ Հովակիմյան

-Ես տեղյակ եմ խնդրի մասին, բնակչին ընդունել եմ մի քանի անգամ, եղել եմ տեղում: «Վեոլիա ջուր» ընկերությունը կատարել է այդտեղ աշխատանք՝ կոյուղատար համակարգը փոխարինված է, որոշակի աշխատանք կատարել է նաև համատիրությունը: Նշված խնդիրը գտնվում է սեփականատիրոջ տարածքի մեջ և նա իր ուժերով պետք է իրականացնի անհրաժեշտ աշխատանքները: Պարոն քաղաքապետ ես ևս մեկ անգամ կայցելեմ և կփորձենք հարցին լուծում գտնել:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյան, խնդրեմ:

Մանուկ Սուքիասյան

-Հարցս վերաբերում է հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների դպրոցին: Նախորդ նիստին ասացիք, որ մեկ այլ դպրոցի ավտոբուս է հատկացվել: Խնդիրը միայն փոխադրամիջոցի հարցը չէր: Այն գազելները, որոնցից այժմ օգտվում են, հատուկ մասնագիտացված ու հարմարեցված են սայլակները բարձրացնելու համար: Ձեր կողմից տրամադրված ավտոբուսը չի լուծում այդ հարցը և խոսքը երկու տեխնիկայի մասին է:

Այո, հանրակրթության վարչության պետն ասել է, որ այնտեղ 117 հոգի է սովորում, բայց բոլորը չէ որ դրա կարիքն ունեն և դրա համար 5-6 տրանսպորտային միջոցի մասին չէ խոսքը: Խնդրում եմ լուծեք այս հարցը՝ նախարարության հետ համատեղ, կամ թույլ տվեք բարերարը նվիրի:

Տիգրան Ավինյան

-Պարոն Արևշատյան, խնդրում եմ միջոցներ ձեռնարկել այս հարցին լուծում տալու համար:

Մանուկ Սուքիասյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Երևանի հ.171 դպրոցին: Ահազանգ ենք ստացել, որ «Վիրտուալ հանրագիտարան» ծրագրով ֆիլմ են ցուցադրել, որը դիտել են VR ակնոցներով: Այն եղել է թեմատիկայից դուրս՝ պայքարել հարձակվող սարդերի, կարիճների դեմ, կենդանիներից փախնել և այլն: Արդյունքում, դպրոցում ֆիլմը դիտած երեխաների 90 տոկոսի մոտ առաջացել է սրտխառնոց, գլխապտույտ և մեկ ուշագնացության դեպք է եղել: Որոշ ծնողներ դիմել են հոգեբանի: Արդյոք տեղյա՞կ եք այդ խնդրից և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ ի՞նչ քննարկումներ եք ունեցել այդ միջադեպի հետ կապված:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը:

Մարգարիտ Խաչատրյան

-Տեղյակ ենք դեպքից, եղել է նման իրավիճակ: Այն երեխան, ով ուշագնաց է եղել, ունեցել է նաև առողջական խնդիրներ, մասնավորապես՝ տեսողության խնդիր, ինչի պարագայում ցանկալի չի եղել նմանատիպ ակնոցներից օգտվելը:

«Վիրտուալ հանրագիտարան» ծրագիրը երաշխավորված է եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Մեզ փոխանցվել է տեղեկատվություն, որ դպրոցներում կարելի է իրականացնել այդ ծրագիրը և մենք փոխանցել ենք դպրոցներին: Միջադեպից հետո դադարեցվել է, այս պահին բոլոր երեխաները լավ են: Դեպքից հետո խոսել ենք նաև այն դպրոցների տնօրենների հետ, որտեղ կիրառվել էր ծրագիրը, որոշ դեպքերում նշում են, որ այո՛, որոշ երեխաների ինքնազգացողությունը փոփոխվել է, սակայն չենք կարող գնահատական տալ ֆիլմի նյութից է, թե ոչ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմենակ Դանիելյան, խնդրեմ:

Արմենակ Դանիելյան

-Առաջին հարցս վերաբերում է Երևան քաղաքի վերգետնյա անցումներին, որոնց մի մասը ունեն ծածկեր, մյուս մասը՝ ոչ: Ծածկերն անձրևների և ձյան տեղումների ժամանակ կապահովեն քաղաքացիների ապահով տեղաշարժը:

Անցումների մյուս խնդիրը վերաբերում է վերելակների բացակայությանը: Վերգետնյա 2 վերելակով անցումներ նկատել եմ Դավթաշենի և Նորագավիթի տարածքներում, որոնք չեն աշխատում: Անցումներում վերելակների առկայությունն անհրաժեշտ է, և ես առաջարկում եմ, ինչպես ստորգետնյա անցումներում կան վերելակներ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար և այն ծնողների, ովքեր երեխաների հետ անվասայլակներով են, այնպես էլ վերգետնյա անցումներում լինեն վերելակներ:

Տիգրան Ավինյան

-Շատ լավ պարոն Դանիելյան, վերգետնյա անցումների 2 վերելակը, որոնք նշում եք, ենթադրում եմ հյուսիս-հարավ ծրագրի խնդիրներց մեկն է, որ առկա է:

Այս մասով պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Պարոն քաղաքապետ Նորագավիթի և Դավթաշենի վերգետնյա անցումները կառուցվել են Ասիական բանկի ֆինանսավորմամբ ճանապարհաշինության շրջանակներում և կոնսերվացված են: Երրորդ վերգետնյա անցման վերելակը նախատեսված է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բաբաջանյան փողոցի վրա, հորանները պատրաստ են, բայց վերելակ տեղադրված չէ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Արևշատյան, խնդրում եմ կառուցված վերելակները գործարկելուց ուսումնասիրել դրանց օգտագործելիությունը:

Վիլեն Արևշատյան

-Պարոն քաղաքապետ խնդիր առկա է նաև ստորգետնյա անցումների մասով, կուսումնասիրենք հարցը և կներկայացնենք:

Արմենակ Դանիելյան

-Երկրորդ հարցս վերաբերում է Աջափնյակ վարչական շրջանի 2 դպրոցներին:

Առաջինը՝ Գևորգ Չաուշի անվան հ.188 դպրոցի հիմնանորոգման վերաբերյալ է, որի մասին ես անցած տարի էլ եմ խոսել: Քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը պատասխանեց, որ ինքը տեղյակ է խնդրից, որ այո՛, դպրոցը հիմնանորոգման կարիք ունի և առաջիկա ծրագրերից մեկում հիմնանորոգումը կնախատեսվի:

Հարցս հետևյալն է. առաջիկա ի՞նչ ծրագրերով եք նախատեսում, որպեսզի այդ դպրոցը հիմնանորոգվի: Երևանի 2026-2028թթ. զարգացման ծրագրում կար գումար, որ հատկացվելու էր կրթության և գիտության ծրագրերին: Ես տեղեկացել եմ, որ այդ ծրագրով դպրոցներ հիմանանորգվելու են: Այժմ ցանկանում եմ իմանալ ի՞նչ ծրագրով եք նախատեսում հիմնանորոգել Գևորգ Չաուշի անվան հ.188 դպրոցը:

Նույն խնդիրը վերաբերում է նաև Զորայր Խալափյանի անվան հ. 156 դպրոցին: Արդյոք պատրաստվում եք այս երկու դպրոցները հիմնանորգել 2026թ. և քանի բյուջեն դեռ չի հաստատվել, նախատեսեք գումար կամ ինչ-որ այլ տեղից հատկացրեք գումար այս երկու դպրոցները հիմնանորոգելու համար, որովհետև այդ երկու դպրոցները գտնվում են վատ վիճակում:

Տիգրան Ավինյան

-Պարոն Դանիելյան, դպրոցների հիմնանորոգումը կատարվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և տարածքային կառավարման հիմնադրամի կողմից, որովհետև դպրոցները համարվում են պետական գույք և այդ ծրագրերը, որոնք իրականացվում են, իհարկե, նաև մեզ հետ քննարկումներով և համաձայնեցմամբ, դրանք իրականացվում են պետության կողմից՝ պետական ֆինանսավորմամբ:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը:

Մարգարիտ Խաչատրյան

-Նշեմ, որ Զորայր Խալափյանի անվան հ. 156 դպրոցը հիմանանորոգման ծրագրում է, եթե չեմ սխալվում նախագծի մրցույթն արդեն կայացել է և շինարարության մրցույթ պետք է հայտարարվի, իսկ Գևորգ Չաուշի անվան հ.188 դպրոցը, այո՛, անվիճելիորեն կարիք ունի հիմնանորոգման, ինչի մասին մենք պարբերաբար տեղեկատվություն փոխանցում ենք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Տիգրան Ավինյան

-Տիկին Խաչատրյան, Գևորգ Չաուշի անվան հ.188 դպրոցը հիմնանորոգման ցանկում առկա է, թե ոչ:

Մարգարիտ Խաչատրյան

-Առկա չէ, պարոն քաղաքապետ:

Տիգրան Ավինյան.

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյան, խնդրեմ:

Գրիգոր Իսկանդարյան

-Հարցս վերաբերում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ա. Բաբաջանյան փողոցի հ.115 շենքի և Օհանովի փողոցի հ.6 շենքի բակերում կատարված բարեկարգման աշխատանքներին:

Իմ գործընկերների հետ այցելել եմ նշված բակեր: Այդ բակերը բարեկարգվել են մեկ պայմանագրով՝ (մեկ գնումով) տարբեր ծավալաթերթ-նախահաշիվներով:

Ա. Բաբաջանյան փողոցի հ.115 շենքի բակում տեղադրված պտտվող խաղասարքի (կարուսել) արժեքը 600000 ՀՀ դրամ է, զսպանակավոր խաղասարքինը՝ 550000 ՀՀ դրամ:

Օհանովի փողոցի հ.6 շենքի բակում տեղադրվել են նույն խաղասարքերը, պարզապես պտտվող խաղասարքի արժեքը 450000 ՀՀ դրամ է, զսպանակավոր խաղասարքինը՝ 400000 ՀՀ դրամ է:

Ինչու՞ է առկա այդպիսի տարբերություն:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Ռոմիկ Մխիթարյանը:

Ռոմիկ Մխիթարյան

- Տենդերը շահած շինարարը բակը բարեկարգելուց հետո, կատարում է գնումներ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Իսկանդարյան, մրցույթում հաղթելու համար յուրաքանչյուր շինարարի պետք է փաստացի առաջարկել նվազագույն գին, թե շինարարը պահանջվող աշխատանքի կազմակերպման համար տողերի բաշխումն ինչպես է կազմակերպում, դա էական չէ: Իրականում պետք է հետևենք, որ տողերն իրար համապատասխանեն:

«Գնումների մասին» օրենքի համաձայն՝ հանրագումարն է կարևոր, այսինքն ամբողջական աշխատանքի հանրագումարի թիվն ամենանվազն առաջարկող շինարարն է հաղթում:

Եթե շինարարն ինչ-որ խաղասարքի համար որևէ տողում ավելի քիչ գումար է գրել, ապա իր կողմից առաջարկվող աշխատանքների հանրագումարով ենթադրաբար ամենացածր գինն է տվել և դրա համար հաղթել է:

Ձեր կողմից մատնանշած հարցն անդրադարձի կարիք ունի, քանի որ մենք ունենք այդպիսի անհամապատասխանություններ և առաջանում են հարցեր՝ ինչ-որ աշխատանքների համար ավելի ցածր կամ բարձր գին է սահմանվում:

Գրիգոր Իսկանդարյան

-Երկրորդ հարցը. հունիս ամսվա վերջում Կոմիտասի պողոտայում կատարվել է գծանշում:

Հուլիս ամսին Կոմիտասի պողոտան քանդում են, ասֆատապատման աշխատանքներ սկսելու համար: Ասֆալտապատման աշխատանքներն ավարտելուց հետո, կրկին կատարում են գծանշման աշխատանքներ:

Ինչու՞ է այդպիսի խնդիրներ առաջանում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանը:

Անդրանիկ Թևոսյան

-Կոմիտասի պողոտայի այդ հատվածում կատարել ենք մեծ ծավալի փոսալցման աշխատանքներ, որովհետև դեպի աջ՝ Վաղարշյան փողոց տանող հատվածն ալիքաձև էր:

Տիգրան Ավինյան

-Հարցի վերաբերյալ ավելի մանրամասն պարզաբանում կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի տեղակալ Հայկ Էվոյանը:

Հայկ Էվոյան

-Պարոն քաղաքապետ, սովորական էմալային ներկով գծանշում կատարվում է տարվա ընթացքում առնվազն երկու անգամ: Ըստ օրենքի՝ կարող ենք երեք ամիսը մեկ կատարել թարմացման աշխատանքներ և ըստ անհրաժեշտության աշխատանքներն իրականացնում ենք:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյան, խնդրեմ:

Սուսաննա Մելիքյան

-Ահազանգեր եմ ստացել Շիրակի փողոցի հ.8 և հ.10 շենքերից, որտեղ կա նկուղների հետ կապված լուրջ խնդիր: Բնակիչները դիմում են ներկայացրել Երևանի քաղաքապետարան: 2024թ. օգոստոսին Ձեր հանձնարարությամբ համատիրության կողմից միայն սանիտարական մաքրման աշխատանքներ են կատարվել: Այնտեղ կոյուղատար խողովակների խնդիր է և լուրջ ինժեներական լուծում տալու անհրաժեշտություն կա: Մեկ տարի է այս հարցը չի կարգավորվում և ես ուզում եմ հասկանալ ո՞րն է համայնքային իշխանության դերն այս առումով և արդյոք հնարավոր չէ՞ հրատապության կարգով այս հարցը լուծել:

Տիգրան Ավինյան

-Տիկին Մելիքյան, իրավական առումով Երևանի քաղաքապետարանն այստեղ դեր չունի: Այնուամենայնիվ, Երևանի քաղաքապետարանը համայնքի միջոցների հաշվին

կառուցում է կոյուղատար համակարգեր, վերականգնում է և մաքրում: Հաջորդ տարվա բյուջեով նախատեսվում է 300մլն դրամ կոյուղատար համակարգերի մաքրման համար: Այն տրված է «Վեոլիա ջուր» ընկերությանը, բացի վերակառուցման, հիմնանորոգման թույլտվություն տալուց, Երևանի քաղաքապետարանը, իրավական առումով, դեր չունի: Սակայն հաշվի առնելով նաև այն իրավիճակը, որ շաբաթական քաղաքում լինում է կոյուղատար համակարգի մոտ 400 վթար, մենք զբաղվում ենք այդ հարցերով, այդ թվում նաև ֆինանսապես:

Այս հարցի վերաբերյալ, խնդրում եմ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար պարոն Գաբրիելյանին, հանդիպում կազմակերպել բնակիչների հետ և հնարավորության սահմաններում աջակցել:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հարոյան, խնդրեմ:

Սամվել Հարոյան

-Հարցս վերաբերում է «Էրեբունի-Երևան» տոնակատարությունների համար տրամադրվող՝ իմ համոզմամբ անհամաչափ գումարներին:

Դուք լավ գիտեք, որ ես ոլորտի ներկայացուցիչ եմ, տիրապետում եմ և ֆինանսական խնդիրներին և ճանաչում եմ երգիչներին, երաժիշտներին, երաժշտախմբերին, երգչախմբերին: Չի ստացվում համակերպվել այդ փաստի հետ, որ 15 երգի համար 70 մլն դրամ է հատկացվել:

Ես իմ ելույթի ժամանակ անդրադարձա նաև այս տարվա միջոցառումներին: Ես չեմ գտնում, որ Երևանի տոնը նշել միայն համերգներ կազմակերպելով: Կարծում եմ, որ որոշ գումարներ անհրաժեշտ էր ուղղել Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Կարմիր բլուր հնավայրի, Շենգավիթ պատմամշակութային հուշարձանների վերանորոգմանը և այլն: Շատ երգիչներ պատրաստ են առանց որևէ վարձավճարի երգել Երևանի տոնի կապակցությամբ և ուրախացնել երևանցիներին:

Հարցս հետևյալն է. ի՞նչն է պատճառը, որ 3-4 անգամ ավելի գումարներ են տրամադրվում երգիչների, երգչախմբերի, երաժիշտների համար:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հարոյան, այն մասին, թե ինչու՞ ոչինչ չի արվում Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Կարմիր բլուր հնավայրի, Շենգավիթ պատմամշակութային հուշարձանների համար «Էրեբունի-Երևան» տոնակատարություն-ների շրջանակներում, որովետև դա տոնակատարություն է, բայց արվում է առանձին:

Մոտ 1.5 ամիս առաջ Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Կարմիր բլուր հնավայրի, Շենգավիթ պատմամշակութային հուշարձանների մասով երեք տարբեր նախագծեր ենք քննարկել՝ «Սնխչյան» ճարտարապետական ստուդիայի կողմից արված կոնցեպտուալ առաջարկներ, որոնք փուլ առ փուլ պետք է կյանքի կոչվեն:

Ինչ վերաբերում է երաժիշտների վճարմանը, պարոն Հարոյան, ես սկզբունքորեն անհամաձայնություն ունեմ Ձեզ հետ: Չեմ կարծում, որ մշակույթի ոլորտն այն ոլորտներից է, որ Երևանի քաղաքապետարանը կամ որևէ այլ պետական մարմին պահանջի, որ երաժիշտները անվճար երգեն: Դա նրանց հիմնական աշխատանքն է և անազնիվ մոտեցում կլինի: Առաջին հերթին հենց քաղաքը պետք է վճարի մարդկանց, քանի որ նրանք իրենց աշխատանքն են կատարում: Առավել ևս եթե խոսքը վերաբերվում է մշակութային գործիչներին:

Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմող՝
Կազմակերպական վարչություն